ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>>

ք.Երևան « 31 » հուլիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Օրիոն 7» ՍՊԸ-ն, (Գործընկեր-1) ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սարգսյանի և «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ-ի (Գործընկեր-2) տնօրեն Ա. Մարկոսյանի, երկուսը միասին (այսուհետ՝ Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների հիման վրա և 01.07.2019 թվականի կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիմքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նուբարաշենի 11-րդ փողոցում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **35 օրացուցային օր**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

2.3 Կողմերի համատեղ գործունեության հաշպահական հաշվառումը վարում է Գործընկեր 1-ը

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **11256000(տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար)** ՀՀ դրամ, որից **1876000 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող

կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությանը**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող Գործընկեր-1**	**Կատարող Գործընկեր-2**
Երևանի քաղաքապետարան	«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ	«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Մամիկոնյանց 27/126	Ք. Երևան, Նուբարաշեն 9/20
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900012410081	Հ/Հ 220453330684000	Հ/Հ 163548004296
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00147538	ՀՎՀՀ 00455925
Է. Կիրակոսյան ----------	Ն. Սարգսյան----------	Ա. Մարկոսյան----------
ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

Հավելված թիվ 1
<<31> հուլիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>>** *գնման պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Նուբարաշենի 11-րդ փողոցում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ

Հ/հ	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չափի միա-վորը	Քանա-կը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Ջրագիծ 1 (Ջ1)				
		Հողային աշխատանքներ				
1	1-960	Բուսահողի հեռացում կուտակումով կրկին օգտագործելու համար	մ^3	5.5	1.078	5.929
2	շուկա	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում սղոցով	մ	1230.0	0.074	91.02
3	1-172	Ասֆալտբետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր, պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափեր	մ^3	43.0	0.567	24.381
4	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	86.0	0.277	23.822
5	27-36	Եզրաքարի ապամոնտաժում բետոնային հիմքովհետ միասին և առանձնացում հետագա օգտագործման համար	մ	12.0	0.636	7.632
6	27-36	Եզրաքարի ապամոնտաժում բետոնային հիմքովհետ միասին , բարձում ինքնաթափ	մ	6.0	0.636	3.816
7	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	2.0	0.277	0.554
8	46-99	Բետոնի կամ երկաթբետոնի քանդում,բարձելով ինքնաթափեր	մ^3	0.4	12.489	4.9956
9	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	0.9	0.277	0.24376
10	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=17սմ հաստությամբ՝խճի մատակարարումով ,տեղադրումով և տոփանումով 68մ^3	100մ^2	4.00	129.207	516.828
11	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=15սմ հաստությամբ՝խճի մատակարարումով, տեղադրումով և տոփանումով 5մ^3	100մ^2	0.333	118.652	39.511
12	27-251	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4.12կգ/մ2, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	տ	1.776	185.499	329.391
13	27-164-2 27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=4սմ հաստությամբ	100մ^2	4.000	258.963	1035.852
14	27-164-1 27-165-1 k=4	Միջնահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	0.310	350.169	108.552

15	27-164-1 27-165-1 k=4	Խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	4.000	350.169	1400.676
16	27-86-1	Կրկին օգտագործման համար առանձնացված եզրաքարերի տեղադրում բետոնի հիմքով, ներառյալ բետոնի մատակարարումով, տեղադրումով	մ	12.000	2.521	30.252
17	27-86-1	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնի հիմքով, ներառյալ մատակարարումով, տեղադրումով	մ	6.000	8.280	49.680
18	6-90.	Բետոնե հենապատի կառուցում 15 դասի բետոնով՝ ներառյալ նյութերի արժեքե	մ^3	0.400	36.992	14.797
19	1-51	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	116.000	0.248	28.768
20	1-961	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ^3	17.000	1.591	27.047
21	1-52	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	296.000	0.343	101.528
22	1-962	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ^3	32.000	2.806	89.792
23	23-1	Խողովակի նախապատրաստական շերտ բերովի ավազից տոփանումով, h=10 սմ	մ^3	41.000	3.117	127.797
24	1-967	Խողովակի վրա բերովի ավազով սկզբնական հետլիցքի իրականացում ձեռքով մինչև խողովակի վերին եզրից 20 սմ բարձրություն, տոփանումով	մ^3	126.000	0.600	75.600
25	1-260 1-271 1-1184	Ետլիցք տեղի գրունտով, տոփանումով	մ^3	133.000	0.220	29.260
26	1-261 1-271 1-1185	Ետլիցք տեղի գրունտով, տոփանումով	մ^3	81.000	0.258	20.898
27	1-170	Քանդած ավելցուկային բնահողերի բարձում ինքնաթափ	մ^3	247.000	0.333	82.251
28	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	444.600	0.277	123.154
		Խողովակային աշխատանքներ				0
1	22-119	Պոլիէթիլենե խողովակ OD110, PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	744.000	2.776	2065.344
2	22-119	Պոլիէթիլենե խողովակ OD90, PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	50.000	1.953	97.650
3	22-68	Պողպատե խողովակ-պատյան D159x4.5, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	44.000	7.300	321.200
4	22-562 q=0,5	Պողպատե խողովակ-պատյանի D159x4.5, նորմալ հիդրոմեկուսացում, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	44.000	0.508	22.352
5	22-365	Պոլիէթիլենե անկյուն OD110, PN10, α=30^0, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	26.000	4.734	123.084
6	22-365	Պոլիէթիլենե անկյուն OD110, PN10, α=45^0, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	4.734	9.468

7	22-365	Պոլիէթիլենե անկյուն OD110, PN10, α=90^0, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	4.698	4.698
8	22-365	Պոլիէթիլենե անցում OD110x90, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	3.540	3.540
9	22-366	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD110x90, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3.000	8.339	25.017
10	22-366	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD110, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	7.722	7.722
11	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD110/DN100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4.000	9.960	39.840
12	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD90/DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	6.000	8.286	49.716
13	22-365	Պոլիէթիլենե խցափակիչ OD110, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	3.832	3.832
14	22-370	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	27.661	55.322
15	22-369	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	20.844	41.688
16	22-430	Պողպատե կցաշուրթ DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	4.322	4.322
17	22-365 կիրառ.	Պոլիմերավազային հոր D900 H=1,2մ, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	65.022	65.022
18	22-398	Միացում DN80 պողպատե խողովակին, արժեք, մատակարարում և մոնտաժ	տեղ	1.000	3.175	3.175
		Հանգույց 1 մասնագիր				
1	22-362	Պողպատե եռաբաշխիկ D108x4, արժեք, մատակարարում և մոնտաժ1հատ	կգ	2.050	1.181	2.421
2	22-366	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD90, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	4.925	4.925
3	22-365	Պոլիէթիլենե անցում OD110x90, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	3.540	3.540
4	22-370	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	27.661	27.661
5	22-369	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	20.844	41.688

6	22-431	Պողպատե կցաշուրթ DN100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	5.720	11.440
7	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD110/DN100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	9.960	19.920
8	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD90/DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4.000	8.286	33.144
9	22-365	Պողպատե անկյուն DN100, PN10, α=45^0, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	3.891	7.782
10	22-68	Պողպատե խողովակ-պատյան D159x4.5, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	9.000	7.300	65.700
11	22-562 q=0,5	Պողպատե խողովակ-պատյանի D159x4.5, նորմալ հիդրոմեկուսացում, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	9.000	0.508	4.572
12	22-66	Պողպատե խողովակ D108x4, արժեք, մատակարարում և մոնտաժ, փորձարկումով	մ	3.000	4.507	13.521
13	22-560 q=0,5	Պողպատե խողովակի D108x4,0, նորմալ հիդրոմեկուսացում, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	3.000	0.333	0.999
14	22-399	D108x4 պողպատե խողովակի միացում DN200 պողպատե խողովակին էլ. եռակցմամբ, արժեք, մատակարարում և մոնտաժ	տեղ	1.000	4.829	4.829
	Զրթողների մասնագիր - 7 հատ (OD90, PN10 խողովակների վրա)					
1	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=10սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 11հատ	մ	1.100	1.126	1.239
2	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=15սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 11հատ	մ	1.650	1.126	1.858
3	16-154	Փական DN20 PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	11.000	2.859	31.449
4	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD110x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	9.000	2.742	24.678
5	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	2.512	5.024
6	15-614	Ձևավոր մասերի երկտակ յուղաներկում անժեք, մատակարարում և մոնտաժ	մ^2	0.280	0.817	0.229
		Ջրագիծ 2 (Ջ2)				
		Հողային աշխատանքներ				
1	1-960	Բուսահողի հեռացում կուտակումով կրկին օգտագործելու համար	մ^3	4.500	1.078	4.851
2	շուկա	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում սղոցով	մ	74.000	0.074	5.476

3	1-172	Ասֆալտբետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր, պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափեր	մ^3	3.000	0.567	1.701
4	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	6.000	0.277	1.662
5	27-36	Եզրաքարի ապամոնտաժում բետոնային հիմքովհետ միասին և առանձնացում հետագա օգտագործման համար	մ	6.000	0.636	3.816
6	27-36	Եզրաքարի ապամոնտաժում բետոնային հիմքովհետ միասին , բարձում ինքնաթափ	մ	2.000	0.636	1.272
7	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	0.400	0.277	0.111
8	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=17սմ հաստությամբ՝խճի մատակարարումով ,տեղադրումով և տոփանումով 3,2մ^3	100մ^2	0.190	129.207	24.549
9	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=15սմ հաստությամբ՝խճի մատակարարումով, տեղադրումով և տոփանումով 1,1մ^3	100մ^2	0.073	118.652	8.662
10	27-251	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4.12կգ/մ2, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	տ	0.107	185.499	19.867
11	27-164-2 27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍ 9128-97-ի, h=4սմ հաստությամբ	100մ^2	0.190	258.963	49.203
12	27-164-1 27-165-1 k=4	Միջնահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	0.070	350.169	24.512
13	27-164-1 27-165-1 k=4	Խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	0.190	350.169	66.532
14	27-86-1	Կրկին օգտագործման համար առանձնացված եզրաքարերի տեղադրում բետոնի հիմքով, ներառյալ բետոնի մատակարարումով, տեղադրումով	մ	6.000	2.521	15.126
15	27-86-1	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնի հիմքով, ներառյալ մատակարարումով, տեղադրումով	մ	2.000	8.280	16.560
16	1-51	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	5.000	0.248	1.240
17	1-961	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կողլիցքով	մ^3	6.000	1.591	9.546
18	1-52	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	2.000	0.343	0.686
19	1-962	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ^3	0.600	2.806	1.684

20	1-968	Խողովակի վրա տեղի փափուկ բնահողից սկզբնական հետլիցքի իրականացում ձեռքով մինչև խողովակի վերին եզրից 200մմ բարձրությամբ, տոփանումով, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	մ^3	1.200	0.665	0.798
21	1-260 1-271 1-1184	Ետլիցք տեղի գրունտով, տոփանումով	մ^3	7.000	0.220	1.540
22	1-170	Քանդած ավելցուկային բնահողերի բարձում ինքնաթափ	մ^3	5.000	0.333	1.665
23	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	9.000	0.277	2.493
		Խողովակային աշխատանքներ				
1	22-119	Պոլիէթիլենե խողովակ OD90, PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	191.000	1.953	373.023
2	22-68	Պողպատե խողովակ-պատյան D159x4.5, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	28.000	7.300	204.400
3	22-562 q=0,5	Պողպատե խողովակ-պատյանի D159x4.5, նորմալ հիդրոմեկուսացում, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	28.000	0.508	14.224
4	22-369	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	20.844	20.844
5	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD90/DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	8.286	8.286
	Զրթողների մասնագիր - 7 հատ (OD90, PN10 խողովակների վրա)					
1	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=10սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 7հատ	մ	0.7000	1.1260	0.7882
2	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=15սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 7հատ	մ	1.0500	1.1260	1.1823
3	16-154	Փական DN20 PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	7.0000	2.8590	20.0130
4	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	7.0000	2.5120	17.5840
5	15-614	Ձևավոր մասերի երկտակ յուղաներկում անժեք, մատակարարում և մոնտաժ	մ^2	0.1800	0.8170	0.1471
		Զրագիծ 3 (Զ3)				
		Հողային աշխատանքներ				
1	1-960	Բուսահողի հեռացում կուտակումով կրկին օգտագործելու համար	մ^3	3.0000	1.0780	3.2340
2	շուկա	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում աղոցով	մ	46.0000	0.0740	3.4040
3	1-172	Ասֆալտբետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր, պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափեր	մ^3	1.6000	0.5670	0.9072
4	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	3.2000	0.2770	0.8864

5	27-36	Եզրաքարի ապամոնտաժում բետոնային հիմքովհետ միասին և առանձնացում հետագա օգտագործման համար	մ	3.0000	0.6360	1.9080
6	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=17սմ հաստությամբ՝խճի մատակարարումով ,տեղադրումով և տոփանումով 1,5մ^3	100մ^2	0.0900	129.2070	11.6286
7	27-42 27-42-1	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցում՝ h=15սմ հաստությամբ՝խճի մատակարարումով, տեղադրումով և տոփանումով 1,1մ^3	100մ^2	0.0730	118.6520	8.6616
8	27-251	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4.12կգ/մ2, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	տ	0.0659	185.4990	12.2244
9	27-164-2 27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=4սմ հաստությամբ	100մ^2	0.0900	258.9630	23.3067
10	27-164-1 27-165-1 k=4	Միջնահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	0.0700	350.1690	24.5118
11	27-164-1 27-165-1 k=4	Խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում ըստ ԳՕՍՏ 9128-97-ի, h=6սմ հաստությամբ	100մ^2	0.0900	350.1690	31.5152
12	27-86-1	Կրկին օգտագործման համար առանձնացված եզրաքարերի տեղադրում բետոնի հիմքով, ներառյալ բետոնի մատակարարումով, տեղադրումով	մ	3.0000	2.5210	7.5630
13	1-51	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	3.0000	0.2480	0.7440
14	1-961	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ^3	4.0000	1.5910	6.3640
15	1-52	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ^3	1.0000	0.3430	0.3430
16	1-962	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ^3	0.6000	2.8060	1.6836
17	1-968	Խողովակի վրա տեղի փափուկ բնահողից սկզբնական հետլիցքի իրականացում ձեռքով մինչև խողովակի վերին եզրից 200մմ բարձրությամբ, տոփանումով, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	մ^3	1.0000	0.6650	0.6650
18	1-260 1-271 1-1184	Ետլիցք տեղի գրունտով, տոփանումով	մ^3	4.0000	0.2200	0.8800
19	1-170	Քանդած ավելցուկային բնահողերի բարձում ինքնաթափ	մ^3	3.6000	0.3330	1.1988
20	շուկա	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 3.0կմ)	տ	6.4800	0.2770	1.7950
		Խողովակային աշխատանքներ				
1	22-119	Պոլիէթիլենե խողովակ OD90, PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	125.000	1.953	244.125
2	22-68	Պողպատե խողովակ-պատյան D159x4.5, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	23.000	7.300	167.900

3	22-562 q=0,5	Պողպատե խողովակ-պատյանի D159x4.5, նորմալ հիդրոմեկուսացում, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	23.000	0.508	11.684
4	22-369	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.000	20.844	41.688
5	22-365	Պոլիէթիլենե փողակ կցաշուրթ ազատ կցաշուրթով OD90/DN80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4.000	8.286	33.144
10	22-366	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD90, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1.000	4.925	4.925
	Զրթողների մասնագիր - 7 հատ (OD90, PN10 խողովակների վրա)					
1	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=10սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 6հատ	մ	0.600	1.126	0.676
2	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=15սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 6հատ	մ	0.900	1.126	1.013
3	16-154	Փական DN20 PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	6.000	2.859	17.154
4	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	6.000	2.512	15.072
5	15-614	Ձևավոր մասերի երկտակ յուղաներկում աևժեք, մատակարարում և մոնտաժ	$մ^2$	0.150	0.817	0.123
		Այգու տարածքում գոյություն ունեցող ոռոգման ջրագծերի վրա նոր ջրթողների նախատեսում				
	Զրթողների մասնագիր - 20հատ					
1	22-64	Պողպատե խողովակակտոր միակողմանի պարուրակով D26x2.5, L=10սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 20հատ	մ	2.0000	1.0436	2.0872
2	22-64	Պողպատե խողովակակտոր երկկողմանի պարուրակով D26x2.5, L=10սմ, արժեք, մատակարարում և մոնտաժ 20հատ	մ	2.0000	1.1260	2.2520
3	16-154	Փական DN20 PN10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	20.0000	2.8590	57.1800
4	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD110x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	9.0000	2.7420	24.6780
5	22-365	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x3/4", PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2.0000	2.5980	5.1960
6	22-397	D26x2,5 միակողմ պարուրակով խողովակակտորի միացում D75 պողպատե խողովակին էլ. եռակցմամբ, արժեք, մատակարարում և մոնտաժ	տեղ	20.0000	1.9795	39.5900
7	15-614	Ձևավոր մասերի երկտակ յուղաներկում աևժեք, մատակարարում և մոնտաժ	$մ^2$	0.5000	0.8170	0.4085
		Ընդամենը՝	հազ.դր.			**9380.0000**
		ԱԱՀ - 20%	հազ. դր.			1876.0000
		Ընդամենը՝	հազ.դր.			**11256.0000**

Տեխնիկական առաջադրանք

1. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան

2.Շինարարական աշխատանքների ընթացքում ապահովել շինհրապարակների պատշաճ կազմակերպումը՝ կիրառելով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակների ժամանակավոր պատնեշով առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետը:

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
ստորագրություն

Կատարող Գործընկեր-1
«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ
Ք. Երևան, Մամիկոնյանց 27/126
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538

Ն. Սարգսյան----------
ստորագրություն

Կատարող Գործընկեր-2
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն 9/20
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163548004296
ՀՎՀՀ 00455925

Վ. Մարկոսյան----------
ստորագրություն

Հավելված թիվ 2
<< 31 > հուլիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքում ոռոգման ցանցերի կառուցման » **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***Երևան քաղաքի Նուբարաշենի 11-րդ փողոցում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	35-րդ օրացուցային օրը
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
կնիքի տեղադրություն

Կատարող Գործընկեր-1
«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ
Ք. Երևան, Մամիկոնյանց 27/126
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538

Ն. Սարգսյան----------
ստորագրություն

Կատարող Գործընկեր-2
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն 9/20
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163548004296
ՀՎՀՀ 00455925

Ա. Մարկոսյան----------
ստորագրություն

Հավելված N 3

<<31> հուլիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		Երևան քաղաքի Նուբարաշենի 11-րդ փողոցում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ	**11 256 000**	**11 256 000**	**11 256 000**	**11 256 000**	**11 256 000**	**11 256 000**	**11 256 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Կատարող Գործընկեր-1
«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ
Ք. Երևան, Մամիկոնյանց 27/126
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538

Կատարող Գործընկեր-2
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն 9/20
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163548004296
ՀՎՀՀ 00455925

Է. Կիրակոսյան ---------- ստորագրություն
Կ.Տ

Ն. Սարգսյան ---------- ստորագրություն

Վ. Մարկոսյան ---------- ստորագրություն

Հավելված թիվ 4
<<11> հուլիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>>** *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 31 > հուլիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/-1

ք. Երևան

«31»հուլիսի 2019 թ.**

«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ-ն, (Գործընկեր-1) ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սարգսյանի՝ ՆՔ 006929681 տր16.10.2015թ 011-ի կողմից և «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2) տնօրեն Ա. Մարկոսյանի՝ ՆՔ 003626959 տր20.01.2015թ 067-ի կողմից , որոնք գործում է Ընկերությունների կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71 * ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կատարող Գործընկեր-1
«ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ
Ք. Երևան, Մամիկոնյանց 27/126
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538

Ն. Սարգսյան----------
ստորագրություն

Կատարող Գործընկեր-2
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն 9/20
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163548004296
ՀՎՀՀ 00455925

Ա. Մարկոսյան----------
ստորագրություն

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[40]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Օրիոն 7» ՍՊԸ և «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ և «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 220453330684000 և Հ/Հ 163548004296

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00147538 և ՀՎՀՀ 00455925

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (h2.N)900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1 125 600 /մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ ADM

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները Ն. Սարգսյան /_____/ Ա. Մարկոսյան /_____/ 21.բ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[40] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*